Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/34343/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 նոյեմբերի 2023 թվական քաղաք Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ա. Սաֆարյանի (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով «Շին մոնտաժ տրանս» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով մրցույթի շրջանակներում 11.10.2023 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 8 արձանագրությունն անվավեր ճանաչելու (դադարեցնելու) և որպես հետևանք գնահատող հանձնաժողովին ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով մրցույթը չկայացած հայտարարել պարտավորեցնելու պահանջների վերաբերյալ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայցվորը 17.10.2023 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Պատասխանողի՝ ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով մրցույթի շրջանակներում 11.10.2023 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 8 արձանագրությունն անվավեր ճանաչելու (դադարեցնելու) և որպես հետևանք գնահատող հանձնաժողովին ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով մրցույթը չկայացած հայտարարել պարտավորեցնելու պահանջների վերաբերյալ:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Սաֆարյանի աշխատակազմին է հանձնվել 31.10.2023 թվականին:

Դատարանի 03.11.2023 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորը հայցադիմումը և կից փաստաթղթերը ստանալուց հետո այն եռօրյա ժամկետում կրկին ներկայացրել է Դատարան, որը դատավոր Ա. Սաֆարյանի աշխատակազմին է հանձնվել 17.11.2023 թվականին:

Դիմելով Դատարան՝ Հայցվորը խնդրել է.

«Անվավեր ճանաչել (դադարեցնել) ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով մրցույթի մրցույթի շրջանակներում 11.10.2023 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 8 արձանագրությունը, որպես հետևանք պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով մրցույթը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ Պատասխանող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեից պետք է պահանջել «ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 199-րդ, 200-րդ, 202-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Շին մոնտաժ տրանս» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի՝ ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով մրցույթի շրջանակներում 11.10.2023 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 8 արձանագրությունն անվավեր ճանաչելու (դադարեցնելու) և որպես հետևանք գնահատող հանձնաժողովին ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1

ծածկագրով մրցույթը չկայացած հայտարարել պարտավորեցնելու պահանջների վերաբերյալ հայցադիմումն ընդունել վարույթ:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեից պահանջել Դատարան ներկայացնել «ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ ԱՐՄԻՆԵ ՍԱՖԱՐՅԱՆ